**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

~~**Հոդված 9. Կամավորները**~~

~~Կամավորներն այն ֆիզիկական անձինք են, ովքեր սույն օրենքի նպատակներից ելնելով՝ կատարում են անհատույց աշխատանքներ բարեգործություն ստացողների օգտին:~~

**Հոդված 9. Կամավորը**

Կամավորը սույն օրենքով սահմանված բարեգործությանը մասնակցում և բարեգործություն ստացողների օգտին կամավոր աշխատանքներ կատարում է օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 13. Բարեգործական ծրագիրը**

2. Լիազորված մարմինն իրականացնում է հետևյալ գործառույթները.

4) որպես բարեգործական որակված ծրագրերի վարչական ռեգիստրը վարելը, ներառյալ՝ բարեգործական ծրագրերը գրանցելը, բարեգործական աջակցության ~~և կամավորների կատարած աշխատանքի~~ հաշվառումը վարելը.

**Հոդված 14. Բարեգործական ծախսերը**

1. Բարեգործական են համարվում բարեգործական ծրագրերի իրականացման նպատակով կատարվող ծախսերը, ~~կամավորների գործունեության հետ կապված ծախսերը~~ բարեգործական ծրագրերի շրջանակներում կամավոր աշխատանքների հետ կապված օրենքով սահմանված կարգով կատարվող ծախսերի վճարները, ինչպես նաև բարեգործական ծրագրերի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը:

**Հոդված 15. Բարեգործության խրախուսումը**

Հայաստանի Հանրապետությունում բարեգործի ~~և կամավորի~~ գործունեությունը խրախուսելու նպատակով Հայաստանի Հանրապետության Նախագահը շնորհում է հետևյալ կոչումները.

1) Հայաստանի Հանրապետության պատվավոր բարեգործ.

~~2) Հայաստանի Հանրապետության պատվավոր կամավոր.~~

3) Հայաստանի Հանրապետության տարվա բարեգործ.

~~4) Հայաստանի Հանրապետության տարվա կամավոր:~~

Հայաստանի Հանրապետության տարվա բարեգործի կոչմանը կարող է արժանանալ այն բարեգործը, ով բարեգործական նպատակների իրականացման համար տվյալ տարում տրամադրել է Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկ և ավելի չափի արժողությամբ բարեգործական աջակցություն, որը նաև այդ տարում բոլոր բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության արժեքների շարքում ամենաբարձրն է:

Հայաստանի Հանրապետության պատվավոր բարեգործի կոչմանը կարող են արժանանալ այն բարեգործները, ովքեր բարեգործական նպատակների իրականացման համար հինգ տարի անընդմեջ ճանաչվել են տարվա բարեգործ:

~~Հայաստանի Հանրապետության տարվա կամավորի կոչմանը կարող է արժանանալ այն ֆիզիկական անձը, ով որպես կամավոր աշխատել է տարեկան 365 ժամից ավելի, միաժամանակ տվյալ տարում նրա՝ որպես կամավորի աշխատած ժամերի տևողությունը գերազանցում է մնացած բոլոր կամավորների այդ տարում աշխատած ժամերին:~~

~~Հայաստանի Հանրապետության պատվավոր կամավորի կոչմանը կարող են արժանանալ այն ֆիզիկական անձինք, ովքեր հինգ տարի անընդմեջ ճանաչվել են տարվա կամավոր:~~

Բարեգործների տրամադրած բարեգործական աջակցության ~~և կամավորների կատարած աշխատանքի~~ հաշվառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Լիազորված մարմինը կարող է կիրառել խրախուսման այլ ձևեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: